



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ
ՌԵՀՎԱՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«26» 09 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 82

Ձեռնարկողը՝

<<ՖԱՐՏՈ ՇԻՆ>> ՍՊԸ

Ք. Երևան, ՀՀ. Քոչարի 14-65

Գործունեությունը՝

Բաղրամյանի հրաբխային գուլֆերի հանքավայրի հարավ-
արևմտյան գեղամասի հանքերնակումում 2018-2019թթ.
Երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Արմավիրի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱՌՈՒԹՅԱՆ**

թիվ ԲՓ 82

<<26>> 09 2018թ.

**Բաղրամյանի հրաբխային գուտքերի հանքավայրի հարավ-արևամդյան
դեղամասի հանքերևակումում 2018-2019թթ. կատարվելիք
երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝

<<ՖԱՐՏՈՇԻՆ>> ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ և կից
փաստաթղթեր /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք

Արմավիրի մարզի Բաղրամյանի հրաբխային տուֆերի հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «ՖԱՐՏՈՇԻՆ» ՍՊԸ-ի սեփական միջոցներով: Հանքաերևակումը գտնվում է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում, զբաղեցնում է 4.7հա տարածք և գտնվում է 1000-1100մ բարձրության վրա: Բաղրամյան գյուղը Արմավիր քաղաքի հետ կապված է 18կմ երկարությամբ ափալտապատ ճանապարհով: Մոտակա բնակավայրերն են Բաղրամյան, Արաք, Կարմրաշեն և Քարակերտ գյուղերը, որոնք հանքերևակումից գտնվում են 3-6կմ հեռավորության վրա:

Հանքերևակման հետազոտման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնված օգտակար հանածոյի մարմնի ծևաբանությունը, տեղադրումը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, տեղամասի չափերը, ուղիեֆի ծևն ու մերկացվածության աստիճանը և այլն:

Ծրագրով նախատեսվում են 1:1000 մասշտաբի երկրաբանահանության աշխատանքներ, մակերեսային լեռնային փորվածքների անցում, հողագոյնությունը մեխանիկական սյունակային հորատում, նմուշարկում, փորձնական համարում: Օգտակար հանածոյի որակը պետք է համապատասխանի 4001-98 ԳՈՄՏՀ և 100-95 ՀԱՏՀ պահանջներին:



Օգտակար հանածոյի բացման, ուսումնասիրման համար ծրագրով նախատեսվում է 1 հետախուզահորի անցում, որը կատարվելու է մեխանիկական եղանակով և ծեռքով, առանց պայթուցիկ նյութերի օգտագործման:

Հորատման աշխատանքներն կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուվածքային թագիկներով՝ 132 և 112մմ տրամագծերով:

Նախատեսվում է հորատել մինչև 8.0մ խորությամբ 7 հորատանցք 56գծ.մ ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույնը ելքը՝ 90%:

Նախատեսված 1-ին խմբի 7 հորատանցքերի հորատումը կիրականացվի ՈՒԳԲ-1-BC տիպի ինքնագնաց հորատող հաստոցով: Նախատեսվում է հորատող հաստոցի 7 տեղակայում և տեղահանում:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հետախուզահորերը և հորատանցքերի հորատահանուկը, փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների:

- հետախուզահորերի փաստագրում 2.5մ,
- հորատահանուկի փաստագրում 56գծ.մ,
- փորձնական բացահանքի փաստագրում 20մ:

Հրաբխային տուֆերը նախատեսվում է ուսումնասիրել որպես ուղիղ կտրվածքի պատքարի հումք:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացիկանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատահանուկի նմուշարկումը (սեկցիայի երկարությունը մինչև 2մ) իրականացնել անընդհատ տիրույթներով: Ընդամենը հորատանցքերից կվերցվի 21 հանուկային նմուշ:

- Մենաքարերի վերցնում բացահանքից 4-ական նմուշ, ընդամենը 4 մենաքար (20 x 20 x 20սմ):

Քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 3 նմուշ:

Քարաքանական կազմի ուսումնասիրման նպատակով կվերցվի 3 ապարանմուշ հղկուկ պատրաստելու համար:

Նախագծով նախատեսվում է նաև 1 համախառն նմուշի վերցնում՝ (200 կգ զանգվածով) արյունահանման թափուներից և փուշտաշերտի ապարներից ստացված խճի և ավագի որակական հատկանիշներն ուսումնասիրելու նպատակով:

Նախատեսվում են նաև ուղիղութրական չափումներ՝ օգտակար հանածոների ճառագայթահիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում: Նախատեսվում են նաև հատուկ ուսումնասիրություններ քարի դեկորատիվ հատկանիշների և մշակման հատկությունների ուսումնասիրման համար:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման գործառական նախատեսվում է 1 փորձնական բացահանքի անցում 10x5x5մ չափում՝ 250գմ³ ծավալը, որից 100մ³ դելյուվիալ առաջացնումներ և 150մ³ չիողմահարկված թառու պապարներ: Վերցներից կկատարվի փորձնական հանույթ՝ պիտանի բլոկների երգ ուղղվածը: Փորձնական հանույթի ընդհանուր ծավալը բացահանքից կկազմի 250մ³.



Ժարմ բլոկներից երեսապատման սալիկների ելքը որոշելու համար նախատեսվում է փորձնական սղոցման ենթարկել մինչև 5.0m^3 ծավալով կոպտամշակված տարրեր կարգերի բլոկներ:

Նախատեսվում է հետախուզվող տեղամասում կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 4.7հա մակերեսով, բոլոր հետախուզական փորվածքների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

Տեղամասի ինժեներակրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների անցման ընթացքում, ինչպես նաև տեղամասի հարևան տարածքների տեղազննում գեղողինամիկ երևոյթների առկայության պարզաբանման նպատակով: Նման երևոյթների առկայության կամ ջրատար հորիզոնների հայտնաբերման դեպքում կերպմի ծրագրի լրացում դրանց ուսումնասիրման համար, որը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից:

Ծրագրով նախատեսված իիմնական աշխատանքներին զուգընթաց հրականացվելու է ռադիոակտիվ տարրերի զանգվածային որոնումներ:

Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար (15-20 օրը մեկ) նախատեսվում է իրականացնել ռադիոչափերի (CP-68-02) էտալոնացում և զգայունության ստուգում:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները: Նախատեսվում է 7 հորատման իրապարակների կառուցում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում: Ճանապարհների նորոգում և կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղամասը ունի հարթ ուղիեթի:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Համաձայն նախնական գնահատման հայտի տարածքում << բոյսերի և կենդանիների կարմիր գործում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկում չկա:

Տեղամասի հետախուզական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից գերծ պահելու նպատակով նախատեսվում է բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- Պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը բացահանքում, ավտոճանապարհների վրա,
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային իրապարակներ, գրունտային ավտոճանապարհ և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- Օգտագործվող ագրեգատները (բուլղոգեր, էքսկավատոր) աշխատեցնել սարքին վիճակում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացահանքու համար,
- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական իրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,



- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուսիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք վայր,
- Ավտոմեքենաների վրա արտաթորվող թունավոր նյութերի չեղոքացուցիչ սարքերի տեղադրում,
- Կեղտաջրերի հավաքում հորատիա գուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով,
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ կենսաբանական ռեկուլտիվացիայի մոթողների կիրառմամբ,
- Ընդերջօգտագործման թափոնների կառավարում:

Տեղամասի ուսումնասիրության ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ արտանետվող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խոսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ վեց ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեղոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ: Այս մշտադիտարկումն իրականացվելու է վիզուալ եղանակով:

Զրային ավագանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքը չեն նախատեսվում:

Զրային ավագանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքը նախատեսված չեն:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հետախուզահորերի, հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է հորատահարթակների տարածքի մակերեսից: Հողաբուսածածկի շերտը վերականգնվում է 0.2մ խորության վրա: Վերականգնման ծավալը կկազմի 56մ³: Վերականգնումը իրականացվելու է ձեռքով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման համար ընկերության կողմից նախատեսվում է 168000դրամ:

Բաղրամյանի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի հանքերևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ թափոնների օբյեկտի ստեղծում չի նախատեսվում: Իսկ կենցաղային աղբը կտեղափոխվեն մոտակա աղբահավաք վայր:



ԵԶՐԱԿԱՆԳՈՒՄ

Այսպիսով՝ Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի նահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են << բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է և հաշվի է առնվել արված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումներին և սոցալ-տնտեսական ծրագրին, իսկ դրանց չքավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Ուսումնասիրության ընթացքում առաջացած շինաղբի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՖԱՐՏՈՇԻՆ>> ՍՊԸ կողմից ներկայացված Արմավիրի մարզի Բաղրամյանի հրաբխային տուֆերի հանքավայրի հարավ-արևմտյան տեղամասի հանքերևակումում 2018-2019թթ կատարվելիք Երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Մասնագետ՝



Ա. Դոնոյան

Հ. Մեսրոպյան